

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի «ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՆԱՍՆԱՔՐՈԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմերը,

2009 թվականի դեկտեմբերի 11-ի «Մաքսային միությունում կիրառվող անասնաբուժասանիտարական միջոցների մասին» համաձայնագրի 10-րդ հոդվածին համապատասխան,

համաձայնեցին հետևյալի մասին՝

Հոդված 1

Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 4-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությունը՝ «Կանոնակարգի եւ » բառերից հետո լրացնել «(կամ)» բառով:

2. 6-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչների, այդ թվում մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հարուցիչների եւ անասնաբուժասանիտարական առումով վտանգ ներկայացնող կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) ներկրումից ու տարածումից Մաքսային միության մաքսային տարածքը պաշտպանելու նպատակով լիազոր մարմինները, ըստ անհրաժեշտության եւ փոխադարձ համաձայնությամբ, կարող են կատարել հսկողության ենթակա Մաքսային միության մաքսային տարածք ներկրվող, ինչպես նաեւ Կողմերից մեկի պետության տարածքից մյուսի պետության տարածք տեղափոխվող ապրանքների (արտադրանքի) արտադրությունը, մշակումն

ու (կամ) պահպանումն իրականացնող կազմակերպությունների եւ անձանց համատեղ ստուգումներ (տեսչական ստուգումներ)»:

3. 7-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությունից հանել «լիազոր մարմինների կողմից տրվող» բառերը:

Հոդված 2

Կողմերի միջև վեճերը, կապված սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրարկման հետ, լուծվում են խորհրդակցություններ եւ բանակցություններ անցկացնելու միջոցով:

Եթե Կողմերը վեճը չեն կարգավորում խորհրդակցություններ եւ բանակցություններ անցկացնելու վերաբերյալ վեճի մի կողմից վեճի մյուս կողմերին պաշտոնական գրավոր խնդրանք հղելու օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա Կողմերից յուրաքանչյուրը փոխանցում է այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 3

Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելը, դրան միանալը կամ դրանից դուրս գալը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային հիմքի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 21 -ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը հանդիսանալով սույն Արձանագրության ավանդապահը, Կողմերից յուրաքանչյուրին ուղարկում է դրա հաստատված օրինակը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից